

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

13 հունվարի 2010 թ.
ք. Երևան

N 1

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

ՆՈՏԱՐՆԵՐԻ ԵԿԱՄՍԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն նոտարական գործողությունների կամ նոտարի մատուցած վճարովի ծառայությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձեռնարկատիրական գործունեության ռեժիմը:

Նոտարների եկամտահարկի պարտավորությունները հաշվարկման ժամանակ նշված իրավական ակտի դրույթները տարբեր կերպ են մեկնաբանվում:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավական ակտի մեկնաբանման և դրա վերաբերյալ պաշտոնական պարզաբանումներ տալու համար սահմանված դրույթներով, պաշտոնապես **պարզաբանում եմ**

1. Որպես եկամտահարկ վճարող, նոտարները՝

1) հարկային մարմին ներկայացնում են տարեկան եկամուտների մասին հաշվարկ (իսկ ամբողջ տարվա ընթացքում ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվող նոտարները՝ տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկ)՝ մինչև հաշվետու տարվանը հաջորդող տարվա ապրիլի 15-ը (ներառյալ), որի հիման վրա հաշվետու տարվա համար հաշվարկում են եկամտահարկը ընդհանուր սահմանված կարգով՝ «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթաչափերով:

2) տարվա ընթացքում եկամտահարկի եռամսյակային կանխավճարներ և նվազագույն եկամտահարկի եռամսյակային վճարումներ չեն կատարում:

3) ամբողջ տարվա ընթացքում ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվելու դեպքում տարեկան եկամտահարկի գումարը չի կարող պակաս լինել համախառն եկամտի 2%-ից և ավելի լինել համախառն եկամտի 10%-ից (նշվածը վերաբերում է միայն 2009 թվականին):

4) հաշվարկված եկամտահարկի գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվանը հաջորդող տարվա մայիսի 1-ը (ներառյալ):

2. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց եկամուտներ (այդ թվում՝ բնամթերային ձևով) վճարելիս նոտարները հանդիսանում են հարկային գործակալ (այսինքն՝ նրանց փոխարեն եկամտի վճարման աղբյուրի մոտ պահում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարում եկամտահարկը):

**ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների
կոմիտեի նախագահ՝**

Գ. Խաչատրյան